

ՏԱԹԵՎ ՍԱՐԳՍԻ
ՀԱԿՈՒՅԱՆ

Քանոնահարուհի, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի
Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի քանոնի բաժնի
մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանող
E-mail: tatevqanon@gmail.com
Doi:10.58580/18290019-2024.1-2-138

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 2.2.2025 թ.,
ընդունվել է տպագրության՝ 20.1.2025 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 17.1.2025 թ.:
© Հեղինակ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution
4.0, 3.0 Licence-ին համապատասխան:

Ընթերցվել է գիտաժողովին 2024 թ. աշնանային ուսանողական գիտաժողովին
Ղեկավար՝ Արվ. Թեկնաձու, դոցենտ Անահիտ Հովհաննեսի Բաղդասարյան

«ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀՈՌՈՎԵԼԻՆ. ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՐՁ»

Անկողում

Հորովածում ներկայացնում ենք մագիստրոսական թեզից մեկ դրվագ՝ Կոմիտաս Կարդապետի «Լորի գութաները Կարդաբլուր գյուղի ոճով» խմբերգը՝ հոռովելի ժանրի համատեքստում և մեկնությունը քանոնահարուհի ամսամբլի կատարմամբ՝ խորագրով: Հորովածում ներկայացվում է հոռովելը, որն ինչպես հայտնի է հայ ժողովրդական երաժշտության հնագույն ժանրերից է՝ հայ ժողովրդի հազարամյակների բազմահարուստ երկրագործական մշակույթի վկայություններից: Ժանրն ունի յուրօրինակ բարբառային եզրույթներ, որոնք աղյուսակով տրված են հորովածում: Հոռովելին անդրադարձել են մի շարք երաժշտագետներ, ազգագրագետներ և բանասերներ՝ այն բազմիցս ձայնագրելով հայկական և եվրոպական նոտագրությամբ, հրատարակելով թե՛ ձայնագրեալ, թե՛ ոչ ձայնագրեալ ժողովածուներում՝ ստեղծելով մենագրություններ, որոնց անդրադարձ է կատարվել հորովածում: Դիտարկել, առանձնացրել ենք կարևորությունն ու արդիականությունը Ջավեն Թագակչյանի «Հայ երկրագործի աշխատանքային երգեր» խորագրով ժողովածուի, որը մինչև օրս իր տեսակի մեջ հոռովելների համահավաք ձայնագրեալ միակ ժողովածուն է:

Բանալի-բառեր. Հայ ժողովրդական երաժշտություն, աշխատանքային երգեր, երկրագործական երգեր, հոռովել, Ջավեն Թագակչյան, ֆոլկլորագիտական գիտարշավներ:

Abstract

Qanon Player, 2nd-year master's student at the Qanon Department of the Chair of Armenian Traditional Music Performance, Yerevan Komitas State Conservatory Tatev Sargis Hakobyan - "A Reflection on Horovel: A Preliminary Attempt".
This article presents an excerpt from a master's thesis titled "Komitas Vardapet's Choral Song "Plough Song of Lori in the Style of Vardablur Village" in the context of the horovel genre and its interpretation performed by a qanon ensemble?The paper explores the horovel, one of the most ancient genres of Armenian folk music, reflecting the millennia-old farming culture of the Armenian people. It provides a classification of dialectal terms specific to this genre, presented in the form of a table. Numerous musicologists, ethnographers, and philologists have studied the horovel, having recorded it in both Armenian and European notation systems and published both transcribed and non-transcribed collections. Several monographs dedicated to this genre are also referenced in the article. Special emphasis is placed on the significance and relevance of Zaven Tagakchyan's collection "Work Songs of the Armenian Farmer", which remains the only comprehensive published and transcribed anthology of horovels to date.

Key Words: Armenian folk music, work songs, farming songs, horovel, Zaven Tagakchyan, folklore research expeditions.

Абстракт

Канонистка, студентка 2-го курса магистратуры кафедры исполнительского искусства армянской традиционной музыки Ереванской государственной консерватории им. Комитаса Татев Саргисовна Акопян. - «Обращение к оровелу: предыдущий опыт».
Представляем отрывок из магистерской диссертации «Лорийская пахотная песня в стиле села Вардаблур» Комитаса Вардапета в контексте жанра оровел и ее интерпретация ансамблем канонистов. В статье представлен оровел, который, как известно, является одним из древнейших жанров армянской народной музыки, свидетельствующий о богатой сельскохозяйственной культуре армянского народа на протяжении тысячелетий. Жанр имеет уникальные диалектные термины, которые приведены в таблице. К оровелам обращались многие музыковеды, этнографы и филологи, многократно записывали их в армянской и европейской нотации, публиковали в записанных и незаписанных сборниках, создавали монографии, которым и посвящена данная статья. Мы рассмотрели и подчеркнули важность и актуальность «Армянских трудовых песен земледельцев» Завена Тагакчяна, сборника, который до сих пор является единственным записанным собранием подобного рода.

Ключевые слова: армянская народная музыка, трудовые песни, сельскохозяйственные песни, оровел, Завен Тагакчян, фольклорные исследовательские экспедиции.

Ժողովրդական ստեղծագործություն

նոտագրությամբ, ի թիվս հայ ժողովրդական երաժշտության այլ ժանրերի՝ հրատարակվել է ձայնագրյալ և ոչ ձայնագրյալ ժողովածուներում (Կոմիտաս Վարդապետ, Սպիրիդոն Մելիքյան, Քրիստափոր Կուչնարյան, Ռոբերտ Աթայան, Արամ Քոչարյան, Մաթևոս Մուրադյան և այլք):

«Հոռովելին» նվիրվել են նաև մենագրություններ: Առաջինը երաժշտագետ, ֆոլկլորագետ Աստղիկ Սահակյանի «Հայկական և Վրացական հոռովելների լադային առանձնահատկությունները» խորագրով ուսումնասիրությունն է (Երևան 1982), որտեղ հոռովելը դիտարկվել է՝ այժմ խիստ արդիական համեմատական երաժշտագիտության տեսանկյունով: Մասնավորապես, ազգագրական, բանահյուսական, լեզվաբանական, երաժշտագիտական ինչպես և այլ նյութերի հիմքով Սահակյանն առաջին անգամ



անգամ դիտարկել է քննարկել է հայկական ու վրացական հոռովելների բովանդակային և ձայնակարգային (լադային) տարբերությունները:

Երկրորդը՝ երաժշտագետ, ֆոլկլորագետ Զավեն Թագակչյանի «Հայոց երկրագործական աշխատանքային երգերի՝ հոռովելների երաժշտալեզվական առանձնահատկությունները. ձայնակարգային կառույցները» (6.) աշխատությունն է (Երևան 2009), որում ներկայացվել է վերլուծվել է բազմաթիվ հոռովելների ձայնակարգային բազմատեսակ նկարագիրը: Աշխատությանը կից հեղինակը կազմել է հրատարակել է «Հայ երկրագործի աշխատանքային երգեր» (Երևան 2009) մեզանում առաջին մենագրային համահավաք ձայնագրյալ (իր տեսակի մեջ բացառիկ) ժողովածուն: Այն աչքի է ընկնում նյութի շարադրման հստակ մեթոդաբանությամբ և մանրամասն մշակված գիտական ապարատով՝ նախաբան, ծանոթագրություններ հոռովելի կատարողի՝ ինֆորմանտի տարիքային, սոցիալական կարգավիճակի և այլնի շուրջ տեղեկություններ, բարբառային բառարան: Ժողովածուն լույս է տեսել ՀՀ ԳԱԱ ԱԲ «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի 2րջ անակում:

Ժողովածուում ընդգրկված են հոռովելների 137 նմուշներ, որոնք ներկայացված են հոռովելի ժանրի բազմապիսի ենթաժանրերով. գուրաներգեր, որոնք կազմում են ներկայացված հոռովելների մեծ մասը (106), ապա՝ տափանի երգեր, կալի երգեր, սայլերգեր: Միաժամանակ՝ առաջին անգամ հոռովելային նյութը դասակարգված է ըստ հայ

մոտոդիկ երաժշտության ավանդական՝ փոյուզական, էռլական, իոնական, հարմոնիկ ձայնակարգերի: Ըստ որում՝ վերջիններիս մեջ, ըստ Թագակչյանի, ընդգրկված են նաև այսպես կոչված «միաձայնակարգ» և «բազմաձայնակարգ» կառույցներով:

Ուշագրավ է, որ ժողովածուում՝ արդեն իսկ հայտնի հրատարակված հոռովելների կողքին, առաջին անգամ լույս են տեսնում և քանակով գերազանցում տարբեր տարիների գիտարշավների ընթացքում հավաքագրված երկրագործական երգերի ձեռագիր նմուշները:

Նշելի է նաև ժողովածուի տարածքային և ազգագրական լայն ընդգրկումը՝ ներկա և պատմական Հայաստան, Հայաստանից դուրս հայաշատ վայրեր՝ Արցախ, Սյունիք, Ապարան, Վայոց ձոր, Գեղարքունիք, Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Կոտայք, Զավախք, Խլաթ, Ալաշկերտ, Սոկո, Վան, Բզդիր, Սուրմալա, Շուշավեր:

Ինչպես հայտնի է, հոռովելները հայ երկրագործի աշխատանքային գործընթացի փոփոխման պատճառով, գրեթե մոռացության են մատնվել: Այս իմաստով Թագակչյանի հայ ժողովրդական երաժշտության նվիրյալի, անխոնջ մշակի, հոռովելների ձայնագրյալ ժողովածուն աներկբա պատմական նշանակություն ունի: Այն մեծապես նպաստում է հոռովելային՝ հայ ժողովրդական երաժշտության այս ինքնատիպ, հայեցի ժանրի պահպանմանը:

Հարկ է անդրադառնալ նաև ժողովածուի գեղարվեստականորեն բարձր արժեքին: Բազմիցս հնչող նմուշների կողքին ժողովածուում գետեղված են հանրությանը ոչ միայն հայտնի, այլև անհայտ գեղեցկագույն հոռովելներ, որոնք հանդիսանում են հայ ժողովրդական, նաև՝ ընդհանուր առմամբ մոտոդիկ երաժշտության գոհարներ [H2], որոնք լավագույնս արտացոլում են հայ շինականի «գեղեցիկի» բացառիկ զգացողությունը և աշխատանքի նկատմամբ ոչ միակերպ վերաբերմունքը:

Ըստ Թագակչյանի. «Աշխատանքի գովքը, հայոց գենի մեջ նստած, ուղղորդել է ամբողջի գոյության ընթացքում: Եվ դա պետք է վեր հանել, քանի որ աշխատասիրությունն ու արարելու ունակությունը հայ ժողովրդին շատ տիպական է» (հարցազրույց Գայանե Ամիրադյանի հետ, Youtube, Թեմ TV, «Ինքնություն. Ճանաչենք մեր երախտավորներին. Զավեն Թագակչյան»):

Թագակչյանի ձայնագրյալ ժողովածուի նմուշները կարող են ընդգրկվել թե՛ ուսումնական գործընթացում, թե՛ զարդարել երգիչների և նվագածուների համերգային ելույթները:

Ստորև ներկայացնում ենք ժողովածուից «Հո, հո, հո... Տե՛ս ինչ ժամանակ ա» հոռովելային պատատիկը, որը ձայնագրվել է 1928 թվականին Սյունիքի մարզի Գորիս քաղաքում: Բանասաց՝ Հովհաննես Գրիգորյանց, 50 տարեկան: Ձայնագրությունը՝ Քր. Կուչնարյանի, նոտագրությունը՝ Զ. Թագակչյանի: Ժողովածուի հեղինակի կարծիքով հոռովելը մտնում է հարմոնիկ միաձայնակարգ կառույցների մեջ:

Արխիվային նյութը պահպանվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Ա Քոչարյանի անվան ձայնադարանում:

Ժողովրդական ստեղծագործություն

Հո, հո, հո
 Ho, ho, ho
 Oo, oo, oo



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայերեն գալառական բառարան, յօրինեց Հրաչեայ Աճառեան, Էմիլյան ազգաբարկան ժողովածու, հատոր Թ, Թիֆլիս, 1913:
2. Հայերեն բացատրական բառարան, հ.3, կազմեց Ս. Մալխասեանց, Երևան, 1944:
3. *Գոմիտաս*, Հողվածներ յեկ ուսումնասիրություններ, Լոռու գութաները Վարդաբլուր գյուղի վոճով, Յերեվան, 1941 թ.:
4. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Եր., 1980 թ.:
5. *Բրատյան Ս.*, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Եր., 2003 թ.:
6. *Թագակչյան Ջ.*, Հայոց երկրագործական աշխատանքային երգերի՝ հորովելների երաժշտալեզվական առանձնահատկությունները. ձայնակարգային կառույցներ, սեղմագիր, Եր., 2009 թ.:

Հ.Նաւասարդ,Գրական և Գեղարուեստական տարեգիրք, Ս., կազմեցին Դանիէլ Վարուժան և 3. ճ. Սիրունի, Կ. Պոլիս, 1914 թ.:
 Armenian Provincial Dictionary. Compiled by Hrachya Atcharyan, Eminian Ethnographic Collection, vol. IX, Tiflis, 1913.

Armenian Explanatory Dictionary, vol. 3, compiled by S. Malkhasyants, Yerevan, 1944.

Komitas, Articles and Studies, The Plough Song of Lori in the Style of Vardablur Village, Yerevan, 1941.

Armenian Soviet Encyclopedia, vol. 6, Yerevan, 1980.

Bmtyan M., Armenian Folk Musical Creation, Yerevan, 2003.

Tagakchyan Z., Musical and Linguistic Characteristics of Armenian Farming Work Songs - Horovels: Modal Structures. Abstract, Yerevan, 2009.

Navasard, Literary and Artistic Yearbook, vol.

1. Compiled by Daniel Varujan and H. Tch. Sirouni, Constantinople, 1914.

REFERECES

1. Hayeren gawarakan bararan, yorinetz Hracheay Adcharean, Eminyan azgagrakan zhoghovatsu, hat or Th, Thiflis, 1913:
2. Hayeren batzatrakan bararan, h.3, kazmetz S. Malxaseantz, Yerevan, 1944:
3. *Komitas*, Hodvatsner yev usumnasiruthyunner, Loru guthanerg՝ Vardablur gyughi vodchov, Yerevan, 1941 th.
4. Haykakan sovetakan hanragitaran, h. 6, Yer., 1980 th.
5. *Brutyun M*, Hay zhoghovrdakan erazhshtakan steghtsagort-suthyun, Yer., 2003 th.
6. *Thagakchyan Z*, Hayotz erkragortsakan ashkhatanqayin yergeri horovelneri erazhshtalezvakan arandzhna-hatkuthyunner dzhaynakargayin karuytner, seghmagir, Yer., 2009 th.
7. Navasard, Grakan ev Gegharvestakan taregirq, A., kazmetzin Daniel Varuzhan ev Y. Dch. Siruni, K. Polis, 1914 th.

Հեղինակի մասին. *SU.ԹԵՎ ՄԱՐԳԱՐԻ ՀԱՎՈՐՅԱՆ* (ծն. 15.10.2000 թ.՝ ք. Արթուրյանում): Ավարտել է՝ 2022-ին՝ Երևանի Գոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի քանոնի բաժինը (բակալավրականը), այժմ ուսանում է նույն բաժնի մագիստրանտական 2-րդ կուրսում: Մասնագիտանում է ԵՊԿ պրոֆեսոր Ծ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Մի շարք միջազգային մրցույթ-փառատոների դափնեկիր է: Մասնակցել է բազմաթիվ համերգների, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում:

About the author: *TATEV SARGIS HAKOBYAN* (was born on October 15, 2000, in the town of Abovyan). From 2018 to 2022, she completed her bachelor's degree specializing in qanon at the Department of Armenian Traditional Music Performance of the Komitas State Conservatory of Yerevan. She is currently pursuing her second year of graduate studies in the same department. H. specializes under the supervision of Professor Tsovinar Hovhannisyann. She is a laureate of several international competitions and festivals and has participated in numerous concerts both in Armenia and abroad.

Об авторе: *TATEV SARKISOVNA AKOPYAN* (род. 15.10.2000, Абовян). Окончила: отделение канона факультета исполнительского искусства армянской традиционной музыки Ереванской государственной консерватории имени Комитаса (степень бакалавра, 2018-2022). В настоящее время учится на 2-м курсе магистратуры того же факультета под руководством профессора Ереванской государственной консерватории Ц. Ованнисян. Лауреат ряда международных конкурсов и фестивалей. Участвовала в многочисленных концертах как в Армении, так и за рубежом.